ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3335-Ա « 16 » հոկտեմբերի 2023 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 29.08.2023 թվականին հայտարարված ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/286 ծածկագրով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ծառերի ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «Կարեն Սահակյան» Ա/Ձ-ն (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ 28.09.2023 թվականին Մասնակցին էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ներկայացվել էր ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/286-2 ծածկագրով պայմանագիր կնքելու, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն հրավերով սահմանված ժամկետում՝ ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, մինչև 05.10.2023 թվականը ներառյալ, Մասնակցի կողմից համակարգում չի կցվել հաստատված պայմանագիրը և ապահովումները:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է չկայացած՝ համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Ընթացակարգը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 06.10.2023 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Կարեն Սահակյան» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

?????? ???????

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ